«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

"YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY
AFTER MKHITAR HERATSI" FOUNDATION

ՀՀ, 0025, Երևան, Կորյունի փ. 2 ▪ Koryun St. 2, Yerevan, 0025, Republic of Armenia ▪ Tel: +374 10 582532 ▪ URL: www.ysmu.am ▪ E-mail: genserv@ysmu.am

թիվ 09/535

«10» 04 2024թ.

«ԼԻՆԱՐԵ ՄԵԴ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ Ա.ՇԵԳՈՒՆՑԻՆ

Հարգելի պարոն Շեգունց,

2024 թվականի հունվարի 24-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի /այսուհետ՝ Համալսարան/ և «Լինարե Մեդ» ՍՊ ընկերության /այսուհետ՝ Ընկերություն/ միջև կնքվել է քիմիական նյութերի, բժշկական նշանակության ապրանքների, բժշկական սարքավորումների պահեստամասերի գնման թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2024/15-2-ԵՊԲՀ-2» պայմանագիր:

Սույն թվականի ապրիլի 4-ին ՀՀ պետական վերահսկողական ծառայության թիվ Ե/792-24 գրությամբ Համալսարանը ծանուցվել է «Լինարե» ՍՊ և «Լինարե Մեդ» ՍՊ ընկերությունների փոխկապակցվածության մասին, մասնավորապես՝ «Լինարե Մեդ» ՍՊ ընկերության տնօրեն Արթուր Ռոբերտի Շեգունցը հանդիսանում է նաև «Լինարե Մեդ» ՍՊ ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր: Գրությամբ ծանուցվել է նաև, որ «Լինարե» ՍՊ ընկերությունը 2023 թվականի դեկտեմբերի 23-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 23-ը ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բացի այդ, Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝

Բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝
6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 121-րդ կետի համաձայն՝

121. Մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

Տվյալ դեպքում «Լինարե Մեդ» ՍՊ ընկերությունը մասնակցության հայտ ներկայացնելով ԷԱՃԱՊՁԲ-2024/15-2-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգին, ներկայացրել է հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին գրավոր հայտարարություն, որով հայտնել և հավաստել է, որ ընկերությունը և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Առաջնորդվելով կնքված Պայմանագրի 8.3-րդ կետով. «Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:» և հաշվի առնելով այն փաստը, որ Պայմանագրի շրջանակներում որևէ ապրանքի մատակարարում չի իրականացվել՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը միակողմանի լուծում է 24.01.2024թ. «Լինարե Մեդ» ՍՊ ընկերության հետ կնքված թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2024/15-2-ԵՊԲՀ-2» պայմանագիրը ամբողջությամբ:

Հիմք ընդունելով 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որաշմամբ հաստատած «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ պայմանագիրը կհամարվի լուծված սույն ծանուցումը տեղեկագրում հրապարակելու հաջորդող օրվանից:

ՌԵԿՏՈՐ Ա. Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ